«ԵՐԵՎԱՆԻ հ. 50 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀՀ 0050, ք.Երևան, Շևչենկո 34/1, Հեռ.՝ (+37410) 44 33 02, էլ.փոստ: school50@schools.am

№ 541

" 05 " սեպտեմբեր 2022թ.

ՀՀ ԿԳՄՍ գլխավոր քարտուղար

Գագիկ Սաֆարյանին

Հարգելի պարոն Սաֆարյան

Տեղեկացնում եմ Ձեզ, որ Երևանի հ. 50 հիմն. դպրոցում առկա են հետևյալ թափուր տեղերը՝ «Ռուսաց լ.» (9 ժամ) և «Կենսաբանություն» (10 ժամ):

Կից ներկայացնում եմ հայտարարության տեքստը: Խնդրում եմ Ձեզ հայտարարությունը տեղադրել ԿԳՄՍ պաշտոնական կայքում:

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ՝ ՍՅՈՒԶԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ

Երևանի հ. 50 հիմնական դպրոց ՊՈԱԿ
Կատ.՝ Ա. Սարգսյան
հեռ. 010 44-33-02

Մրցույթ՝ «Երևանի հ. 50 հիմն. դպրոց» ՊՈԱԿ-ի Ռուսաց լ. (9 դասաժամ), Կենսաբանություն (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղ/երի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 7-ից մինչև 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. 09. 22--ին՝ ժամը 13:00-ին**, հ. 50 դպրոցում, հասցե՝ Շնչենկո 34/1: Տեղեկությունների համար զանգահարել 010-443302 հեռախոսահամարով: